

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017Թ.

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՄԱՍՅԱՆՎՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

29.12.2017թ. -ին Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքում տեղի ունեցավ հանրային լսում՝

Նախագահությամբ՝ համայնքի ղեկավար Ա. Ղազարյանի

Քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար Ն. Պետրոսյանի

Մասնակցում էին՝ ավագանու անդամները, համայնքապետարանի աշխատակազմը, մանկավարժներ, բուժ.ամբուլատորիայի աշխատակիցները, արվեստի դպրոցի և մանկապարտեզի աշխատակիցները և համայնքի բնակիչները :

Լսեցին Վերին Արտաշատ համայնքի ղեկավար Ա.Ղազարյանի հաշվետվությունը 2017թ. 2-րդ կիսամյակում կատարված աշխատանքների մասին :

Արձանագրվեց, որ 2017թ. 2-դ կիսամյակում համայնքապետարանի կողմից համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները .

- Համայնքապետարանը բնակիչներից ստացել է 185 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի սոցիալական հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստերի, ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ :
- Համայնքապետարանը ստացել է պաշտոնական նամակներ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են սահմանված ժամկետներում և տրվել են պատասխաններ :
- Բնակիչներին տրվել է 530 տեղեկանք :
- Քաղաքացիների գրավոր և բանավոր դիմումների հիման վրա կատարվել են հողամասերի չափագրման և սահմանների ճշտագրման աշխատանքներ :
- 2017թ. Բյուջեի սեփական եկամուտները, որոնք կազմում են տարեկան 102769.50 հազ. դրամ, մուտքագրվել է 105486.49 հազ. դրամ, որը կազմում է սեփական եկամուտների 102.64 %-ը : Ըստ առանձին հարկատեսակների եկամուտները կազմել են՝
  1. Հողի հարկ՝ պլան – 21793.40 հազար դրամ փաստացի կատարվել է 21842.02 հազ. դր.կամ 100.22%
  2. Գույքահարկ փոխադրամիջոցներից՝ պլան – 13010.00 հազար դրամ փաստացի կատարվել է 15547.77 հազ.դրամ կամ 119.51 %
  3. Գույքահարկ շենքերի համար՝ պլան- 1007.6 հազար դրամ փաստացի կատարվել է 1082.00 հազար դրամ կամ 107.38 %
  4. Տեղական տուրք՝ պլան – 762.0 հազար դրամ փաստացի կատարվել է 776.1 հազար դրամ կամ 101.8%

5. Հողի վարձակալություն ` պլան -1402.5 հազար դրամ փաստացի կատարվել է 1399.90 հազար դրամ կամ 99.81 %
6. Այդ թվում գյուղ նշանակության ` պլան - 292.5 հազար դրամ փաստացի կատարվել է 289.9 հազար դրամ կամ 99.11 %
7. Ծնողական գումար ` պլան -4770.00 հազար դրամ , փաստացի կատարվել է 4817.37 դրամ կամ 100.99%
8. Դոտացիա ` պլան - 57890.1 հազար դրամ փաստացի կատարվել է 57890.1 հազար դրամ կամ 100 %
9. Սուրվենցիա ` պլան 2133.9 հազար դրամ փաստացի կատարվել է 2130.52 հազար դրամ կամ 99.84 %

• Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ տնտեսական միջոցառումներ և ծրագրեր , որոնցից են `

Համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 3263000 դրամ ֆինանսական օգնություն :

Մահացածների ընտանիքներին տրվել է 440.0 հազար դրամ ֆինանսական օգնություն :

Հասարակական կազմակերպություններին տրվել է 652500 դրամ ֆինանսական օգնություն :

Միջնակարգ դպրոցին տրվել է 200.0 հազար դրամ ֆինանսական օգնություն :

Պարգևատրվել են զոհված զին. ծառայողների ընտանիքները , հայրենական մեծ պատերազմի վետերանները և Շուշիի ազատագրմանը մասնակցած ազատամարտիկները ` 220000 հազար դրամ :

- 2017թ-ի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարվել է համայնքի փողոցների խճապատում / 975.8 հազար դրամ / :
- Համայնքում ըստ գործող գրաֆիկի կատարվում է փողոցներ աղբահանությունը :
- 2017թ-ի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի Ա.Գալստյան փողոցում անցկացվել է գիշերային լուսավորություն / 975.5 հազար դրամ / : Ինչպես նաև համայնքի Արարատյան , Հախնազարյան , Թամանյան , Երևանյան և Շահումյան փողոցներում մշտապես առկա է գիշերային լուսավորություն :
- Համայնքապետարանը առաջին դասարանցիներին ապահովել է պայուսակներով և գրենական պիտուքներով / 300000 դրամ / :
- Համայնքապետարանը 1-4 -րդ դասարանցիներին և մանկապարտեզի սաներին Նոր տարվա կապակցությամբ հանձնել է նվերներ ` 350000 դրամ արժողությամբ , կազմակերպվել է Ամանորյա զեղեցիկ միջոցառում Ձմեռ պապի և Ձյունանուշի և հեքիաթային հերոսների մասնակցությամբ :

Վերին Արտաշատ համայնքի ղեկավար

Ա.Ղազարյան

10.01.1018թ.

